



### 100. ԾՆԾՂՈՒ ԽԱԲԱՐ

Մարդ մե վար կէներ, կը կանի օր քիչ մե հանգ առնե, ակոսից դեղին ճնճուղ մե կը թռնա նստի փիչուն, կը ճլվլա.

— Յըսօր քըղի հաց ո՞ն պտի բերե:

— Իմ կնիկ, էլ ո՞ն:

— Օր գիկա,— կըսե ճնճուղ,— սուր-սուր իշկե աչքերուն, թե ուրին կորցուց՝ ծուռ է քելի, չը կորցուց՝ անմեղ է:

— Տո՛, դու ի՞նչ դինաս մեր տան անցուդարձ:

— Ձեր ցվքի ճնճուղ:

Հացվոր գիկա, մարդ սուր-սուր կիշկե, կնիկն ահուց կը կորցու ուրին:

— Կնի՛կ,— կըսե մարդ,— դու չըսօր ծուռ իս քելի:

— Քա՛, յա, ո՞ր կըսե:

— Մեր ցվքի ճնճուղ:

Կնիկն հեռսից կը կարմրի:

— Կա՛նի հլա,— կըսե,— էրթա՛մ, սև պտի բերիմ գլխուն. լեզուն կտրիմ, թալիմ շան, հարա՛մ էղնի էն կուտ, օր տվեր ի՞մ ուրին:

